ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << ԵՔ-ԳՀԾՁԲ-19/43-1

ք. Երևան 28 մարտի 2019թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետի Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ -ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Աղաջանյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **19396000** (տասնինը միլիոն երեք հարյուր իննսունվեց հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի բաժինը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	Կատարող
Երևանի քաղաքապետարան	ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտի փող. 1	ք. Ստեփանավան, Զարենցի 179/28
Կենտրոնական գանձապետարան	«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
ՀՀ 900012410479	Հ/Հ 16033015694600
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 06952546

Է. Կիրակոսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Ղ. Աղաջանյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 1
28. 03. 2019թ. կնքված ԵՔ-ԳՀԾՁԲ-19/43-1
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության						ՀՀ դրամ	
						մատուցման	
Հ/Հ	միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ (CPV) դասակարգման	անվանումը	տեխնիկական բնութագիրը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
2	92621110	ՀՀ 28-րդ մարզական խաղեր մարզական միջոցառումներ	«ՀՀ 28-րդ մարզական խաղեր» մարզական միջոցառման երևանյան փուլի անցկացման և եզրափակիչ փուլին մասնակցության համար անհրաժեշտ է ապահովել՝ · մրցումների անցկացում բասկետբոլ, ֆուտբոլ, սեղանի թենիս հանդբոլ, վոլեյբոլ, ֆուտզալ, լողափնյա վոլեյբոլ, մարզաձևերից՝ մասնագիտացված և չափորոշիչներին համապատասխան ու սանիտարահիգիենիկ պայմաններ ունեցող սանհանգույցներով ու հանդերձարաններով կահավորված, ինչպես նաև ըստ մարզաձևերի համապատասխան գծանշումներ ունեցող խաղադաշտերում, Երևանի 12 վարչական շրջանները ներկայացնող և կանոնակարգային պահանջներով ձևավորված թիմերի միջև, · մասնագիտական անհրաժեշտ քանակի մարզական գույք, · տեխնիկական անհրաժեշտ գույք, · բժշկական ծառայություններ՝ անհրաժեշտ դեղորայքով և միջոցներով, կամ շտապ բուժ օգնության 1 անձնակազմի ծառայություններ, · տեխնիկական և սպասարկող անձնակազմի ծառայություններ, · մրցավարական անձնակազմի քանակի ճշտում և ընտրության իրականացում աթլետիկայի ֆեդերացիայի միջոցով, · խորհրդակցության և վիճակահանության անցկացում մրցավարական հանձնախմբի կողմից՝ միջոցառման մասնակիցների ներկայացուցիչների մասնակցությամբ, · մրցավարական, տեխնիկական և սպասարկող անձնակազմին օրապահիկների կանխիկ գումարների բաշխում, · մարզական միջոցառման հաղթողների և մրցանակակիրների պարգևատրում՝ Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված	3400000	8	ք.Երևան	մարտ

			գավաթներով, դիպլոմներով, պատվոգրերով ու շնորհակալագրերով, ինչպես նաև մետաղական, ոսկեգույն, արծաթագույն, բրոնզագույն մեդալներով, որոնց առջևի երեսին նշված լինի գրված տեղն ու միջոցառման անվանումը, իսկ երկրորդ երեսին՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ գրառումն ու Երևանի զինանշանի պատկերը: • Երևանյան փուլում ըստ մարզաձևերի առաջին տեղեր գրված թիմերին եզրափակիչ փուլին մասնակցելու նպատակով տրանսպորտային ծառայություններ, • Եզրափակիչ փուլին մասնակից երևանյան թիմերի համար 161 հատ մարզատաբատներ ու 161 հատ մարզաշապիկներ, վերջիններիս թիկնակը «ԵՐԵՎԱՆ» տպագրությամբ /մարզաշապիկների կտորի որակը գույնն ու ձևը նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ/:				
3	92621110	ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկության երևանյան փուլ	«ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկության երևանյան փուլ» մարզական միջոցառման անցկացման համար անհրաժեշտ է ապահովել՝ • մրցումների անցկացում կանոնակարգով նախատեսված աթլետիկական մրցաձևերից՝ մասնագիտացված և չափորոշիչներին համապատասխան ու սանիտարահիգիենիկ պայմաններ ունեցող սանհանգույցներով ու հանդերձարաններով կահավորված, ինչպես նաև ըստ մրցաձևերի համապատասխան գծանշումներ ունեցող աթլետիկական մարզաբազայում, Երևանի 12 վարչական շրջանները ներկայացնող և կանոնակարգային պահանջներով ձևավորված թիմերի միջև, • մասնագիտական անհրաժեշտ քանակի մարզական գույք, • տեխնիկական անհրաժեշտ գույք, • բժշկական ծառայություններ՝ անհրաժեշտ դեղորայքով և միջոցներով, կամ շտապ բուժ օգնության 1 անձնակազմի ծառայություններ, • տեխնիկական և սպասարկող անձնակազմի ծառայություններ, • մրցավարական անձնակազմի քանակի ճշտում և ընտրության իրականացում աթլետիկայի ֆեդերացիայի միջոցով, • խորհրդակցության և վիճակահանության անցկացում մրցավարական հանձնախմբի կողմից՝ միջոցառման մասնակիցների ներկայացուցիչների մասնակցությամբ, • մրցավարական, տեխնիկական և սպասարկող անձնակազմին օրապահիկների կանխիկ գումարների բաշխում,	1900000	1	ք.Երևան	մարտ

			· մարզական միջոցառման հաղթողների և մրցանակակիրների պարգևատրում՝ Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված գավաթներով, դիպլոմներով, պատվոգրերով ու շնորհակալագրերով, ինչպես նաև մետաղական, ոսկեգույն, արծաթագույն, բրոնզագույն մեդալներով, որոնց առջևի երեսին նշված լինի գրված տեղն ու միջոցառման անվանումը, իսկ երկրորդ երեսին՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ գրառումն ու Երևանի զինանշանի պատկերը: · Երևանյան փուլում, ըստ մարզաձևերի, առաջին տեղեր գրված թիմերին եզրափակիչ փուլին մասնակցելու նպատակով տրանսպորտային ծառայություններ, · Եզրափակիչ փուլին մասնակից երևանյան թիմերի համար 30 լրակազմ մարզահանդերձանք /1 լրակազմը ներառում է՝ 1 մարզակոստյում, 1 մարզաշապիկ, 1 մարզագլխարկ, 1 մարզապայուսակ, մեկ մարզակոշիկ/, ինչի մոդելները, գույները, նյութի որակը, էսքիզները, ինչպես նաև նմուշը նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ:				
4	92621110	<< դպրոցականների շախմատի 13-րդ օլիմպիադայի երևանյան փուլ	«ՀՀ դպրոցականների շախմատի 13-րդ օլիմպիադայի երևանյան փուլ» մարզական միջոցառման անցկացման համար անհրաժեշտ է ապահովել՝ · մրցումների անցկացում շախմատ մարզաձևից՝ միջազգային չափանիշներին համապատասխան մարզասրահում, · մասնագիտական անհրաժեշտ քանակի մարզագույք, · տեխնիկական անհրաժեշտ գույք, · բժշկական ծառայություններ՝ անհրաժեշտ դեղորայքով և միջոցներով, · տեխնիկական և սպասարկող անձնակազմի ծառայություններ, · մրցավարական անձնակազմի քանակի ճշտում և ընտրության իրականացում շախմատի ՀՀ ֆեդերացիայի միջոցով, · խորհրդակցության և վիճակահանության անցկացում մրցավարական հանձնախմբի կողմից՝ միջոցառման մասնակիցների ներկայացուցիչների մասնակցությամբ, · մրցավարական, տեխնիկական և սպասարկող անձնակազմին օրապահիկների կանխիկ գումարների բաշխում, · մարզական միջոցառման հաղթողների և մրցանակակիրների պարգևատրում՝ Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված հուշանվերներով, գավաթներով, դիպլոմներով, պատվոգրերով ու շնորհակալագրերով, ինչպես նաև մետաղական, ոսկեգույն,	600000	1	ք.Երևան	մայիս

			արծաթագույն, բրոնզագույն մեդալներով, որոնց առջևի երեսին նշված լինի գրված տեղն ու միջոցառման անվանումը, իսկ երկրորդ երեսին՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ գրառումն ու Երևանի զինանշանի պատկերը:				
5	92621110	Երևանի հատուկ դպրոցների ֆուտբոլի մրցաշար	«Երևանի հատուկ դպրոցների ֆուտբոլի մրցաշար» մարզական միջոցառման անցկացման համար անհրաժեշտ է ապահովել՝ • միջոցառման անցկացման համար համապատասխան խոտածածկ մարզադաշտ, կահավորված՝ ֆուտբոլ խաղի անցկացման համար նախատեսված սպիտակ գծանշումներով և երկու հատ 2 x 3 մետր չափերի համապատասխան ցանցերով պատված դարպասներով, կամ վերոհիշյալ կահավորմամբ մարզադահլիճում, • մասնագիտական գույք՝ 10 հատ N 4 ֆուտբոլի գնդակներ, • միջոցառման անցկացման համար անհրաժեշտ տեխնիկական գույք և գրենական պիտույքներ, • ձայնային ապարատուրա՝ 1 կվտ. հզորությամբ, 2 խոսափողով և սպասարկող անձնակազմով, • բժշկական ծառայություններ՝ անհրաժեշտ դեղորայքով, այդ թվում՝ սառեցնող-ցավազրկող, կամ շտապ բուժ օգնության 1 անձնակազմի ծառայություններ, • տեխնիկական և սպասարկող անձնակազմի ծառայություններ, • խորհրդակցության անցկացում միջոցառման մասնակիցների ներկայացուցիչների մասնակցությամբ, • մրցավարական անձնակազմի քանակի ճշտում և ընտրության կատարում ֆուտբոլի ՀՀ ֆեդերացիայի միջոցով, • մրցավարական և սպասարկող անձնակազմին օրապահիկների կանխիկ գումարների բաշխում, • վերահսկողություն մրցավարների կողմից միջոցառման արդյունքների անաչառ ամփոփմանը, • միջոցառման հաղթողների և մրցանակակիրների պարգևատրում՝ Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված հուշանվերներով, գավաթներով, դիպլոմներով, պատվոգրերով ու շնորհակալագրերով, ինչպես նաև ոսկեգույն, արծաթագույն, բրոնզագույն մեդալներով, որոնց առջևի երեսին նշված լինի գրված տեղն ու միջոցառման անվանումը, իսկ երկրորդ երեսին՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ գրառումն ու Երևանի զինանշանի պատկերը: • միջոցառման մասնակից թիմերի տեղափոխման նպատակով	650000	1	ք.Երևան	մայիս

			տրանսպորտային ծառայություններ Երևան քաղաքի մեջ:				
6	92621110	Երևանյան մարզական ամառ 2019 մարզամշակութային միջոցառում	«Երևանյան մարզական ամառ 2019» մարզամշակութային միջոցառման անցկացման համար անհրաժեշտ է ապահովել՝ · միջոցառման անցկացումը Երևանյան լճում, կամ համարժեք ջրային տարածքում՝ Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցնելով միջոցառման սցենարը, բեմադրող ռեժիսորի ու մասնակից երաժշտական խմբերի և անհատ կատարողների թեկնածությունները, ինչպես նաև սցենարում ընդգրկված ջրային մարզաձևերը, · համաձայնեցված սցենարով նախատեսված ջրային մարզաձևերի մասնագիտական գույք · միջոցառման անցկացման համար անհրաժեշտ տեխնիկական գույք, · բժշկական ծառայություններ միջոցառման ընթացքում՝ անհրաժեշտ դեղորայքով, այդ թվում՝ սառեցնող-ցավազրկող, կամ շտապ բուժ օգնության 1 անձնակազմի ծառայություններ, · տեխնիկական և սպասարկող անձնակազմի ծառայություններ, · խորհրդակցության անցկացում և սցենարի հետ ծանոթացում միջոցառման մասնակիցների կամ նրանց ներկայացուցիչների հետ, · միջոցառման առավել աչքի ընկած 20 լավագույն մասնակիցների պարգևատրում՝ Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված չափի դրամական մրցանակներով:	1350000	1	ք.Երևան	հուլիս
18	92621110	«Լավագույն մարզական ընտանիք» հանրապետական մրցույթ	«Լավագույն մարզական ընտանիք» հանրապետական մրցույթի երևանյան փուլի անցկացման և եզրափակիչ փուլին երևանյան ընտանիքների նախապատրաստման համար անհրաժեշտ է ապահովել՝ · մասնագիտացված մարզադաշտ, որը կահավորված լինի՝ հեռացատկի 2 x 10 մետր չափերի ցատկափոսով, մինչև 400 մետր գծանշումներով 4 վազքուղիներով, մարզադահլիճ, որը կահավորված լինի բասկետբոլի 2 օղացանցերով վահանակներով, ինչպես նաև հրաձգարան, որը կահավորված լինի 10 մետրից կրակելու հարմարություններով և 4 օդամղիչ հրացաններով, · միջոցառման անցկացման համար անհրաժեշտ տեխնիկական գույք և գրենական պիտույքներ, · ձայնային ապարատուրա՝ սպասարկող անձնակազմով, · բժշկական ծառայություններ միջոցառման ընթացքում՝	4488000	1	ք.Երևան ք.Ծաղկաձոր	հունիս

			անհրաժեշտ դեղորայքով, այդ թվում՝ սառեցնող-ցավազրկող, կամ շտապ բուժ օգնության 1 անձնակազմի ծառայություններ, • սպասարկող տեխնիկական անձնակազմի ծառայություններ, • խորհրդակցության անցկացում միջոցառման մասնակիցների ներկայացուցիչների մասնակցությամբ: • մրցավարների քանակի ճշտում և ընտրության կատարում համապատասխան մարզաձևի ֆեդերացիայի միջոցով, • վերահսկողություն մրցավարների կողմից միջոցառման արդյունքների անաչառ ամփոփմանը, • միջոցառման բոլոր մասնակիցների պարգևատրում՝ Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված հուշանվերներով, • 4 անձից բաղկացած մարզչական անձնակազմի ընտրություն աթլետիկայի Երևան քաղաքի ֆեդերացիայի միջոցով, • եզրափակիչ փուլի մասնակից երևանյան ընտանիքների համար, ընտրված մարզչական անձնակազմի միջոցով, Երևան քաղաքում ուսումնամարզական հավաքի անցկացում, • հավաքի ընթացքում օրական երկուանգամյա երկժամանոց պարապմունքների անցկացում, • եզրափակիչ փուլի մասնակից Երևանի մարզական պատվիրակության անդամների համար միասնական 77 լրակազմ /72 մասնակիցներ, 4 մարզիչներ, 1 ներկայացուցիչ/ մարզահանդերձանք /1 լրակազմը ներառում է՝ 1 մարզակոստյում, 1 մարզաշապիկ, 1 մարզագլխարկ, 1 մարզապայուսակ, մեկ մարզակոշիկ, 1 խաղային կիսավարտիք և 1 խաղային մարզաշապիկ/, որի մոդելները, գույները, կտորի որակը, էսքիզները, ինչպես նաև նմուշը նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ: • «Լավագույն մարզական ընտանիք» հանրապետական մրցույթի եզրափակիչ փուլում երևանյան ընտանիքների չորս մարզիչների համար օրական երեքանգամյա սննդի, հյուրանոցային և տրանսպորտային ծառայությունների մատուցում:				
19	92621110	«Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» հանրապետական մրցույթ	«Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» հանրապետական մրցույթի ընտրական փուլի անցկացման և եզրափակիչ փուլին երևանցիների նախապատրաստման ու մասնակցության համար անհրաժեշտ է ապահովել՝ • միջոցառման անցկացումը մասնագիտացված մարզաբազայում, որը կահավորված լինի կանոնակարգով նախատեսված	1048000	1	ք.Երևան ք.Ծաղկաձոր	օգոստոս

			մրցաձևերի անցկացման համար անհրաժեշտ գույքով · միջոցառման անցկացման համար անհրաժեշտ տեխնիկական գույք և պահանջված քանակի ջուր, · բժշկական մասնագիտացված ծառայություններ միջոցառման ընթացքում՝ անհրաժեշտ դեղորայքով, այդ թվում՝ սառեցնող-ցավազրկող, · սպասարկող տեխնիկական անձնակազմի ծառայություններ, · խորհրդակցության անցկացում միջոցառման մասնակիցների ներկայացուցիչների մասնակցությամբ, · մրցավարների ընտրության կատարում աթլետիկայի ֆեդերացիայի և Հայաստանի հաշմանդամների «Ֆյունիկ» միություն ՀԿ միջոցով, · վերահսկողություն մրցավարների կողմից միջոցառման արդյունքների անաչառ ամփոփմանը: · եզրափակիչ փուլի մասնակից Երևանի մարզական պատվիրակության անդամներին միասնական 25 լրակազմ մարզահանդերձանք /1 լրակազմը ներառում է՝ 1 մարզակոստյում, 1 մարզաշապիկ, 1 մարզագլխարկ, 1 մարզապայուսակ, մեկ մարզակոշիկ, 1 խաղային կիսավարտիք և 1 խաղային մարզաշապիկ/, · մարզահանդերձանքի մոդելները, գույները, նյութի որակը, էսքիզները, ինչպես նաև նմուշը նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ:				
27	92621110	Բոնցքամարտի Երևան քաղաքի առաջնություն	«Բոնցքամարտի Երևան քաղաքի առաջնություն» մարզական միջոցառման անցկացման համար անհրաժեշտ է ապահովել՝ · միջոցառման անցկացումը մարզադահլիճում /+ 10 աստիճանից ցածր ջերմաստիճանի գրանցման դեպքում՝ ջեռուցվող/, որը կահավորված լինի բոնցքամարտի միջազգային չափանիշներին համապատասխան 6 x 6 մետր չափերի ռինգով, էլեկտրոնային ցուցատախտակով /տաբլո/ և հանդիսատեսի համար նախատեսված առնվազն 100 նստարաններով, · միջոցառման անցկացումը 18-20 քաշային կարգերով, · մասնագիտական անհրաժեշտ գույք, · տեխնիկական անհրաժեշտ գույք, խմելու ջուր և գրենական պիտույքներ, · ձայնային ապարատուրա՝ սպասարկող անձնակազմով, · բժշկական ծառայություններ՝ անհրաժեշտ դեղորայքով, այդ թվում՝ սառեցնող-ցավազրկող, կամ շտապ բուժ օգնության 1	448000	1	ք.Երևան	մարտ

			անձնակազմի ծառայություններ, • սպասարկող տեխնիկական անձնակազմի ծառայություններ, • խորհրդակցության անցկացում միջոցառման մասնակիցների ներկայացուցիչների մասնակցությամբ, • մրցավարների քանակի ճշտում և ընտրության կատարում համապատասխան մարզաձևի ֆեդերացիայի միջոցով, • մրցավարական և սպասարկող տեխնիկական անձնակազմին օրապահիկների կանխիկ գումարների բաշխում, • միջոցառման հաղթողների և մրցանակակիրների պարգևատրում՝ Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված քանակի, որակի և տեսքի գավաթներով, դիպլոմներով, պատվոգրերով ու շնորհակալագրերով, ինչպես նաև մետաղական, ոսկեգույն, արծաթագույն, բրոնզագույն մեդալներով, որոնց առջևի երեսին նշված լինի գրված տեղն ու միջոցառման անվանումը, իսկ երկրորդ երեսին՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ գրառումն ու Երևանի զինանշանի պատկերը:				
29	92621110	Գեղասահքի Երևան քաղաքի առաջնություն	«Գեղասահքի Երևան քաղաքի առաջնություն» մարզական միջոցառման անցկացման համար անհրաժեշտ է ապահովել՝ • միջոցառման անցկացումը միջազգային չափորոշիչներին համապատասխան փակ սահադաշտում, որի դահլիճը ջեռուցվի և կահավորված լինի էլեկտրոնային ցուցատախտակով /տաբլո/, ձայնային սարքավորումներով ու հանդիսատեսի համար նախատեսված՝ 500 նստարաններով, • սառույցը հարթեցնող մասնագիտացված մեքենաներ՝ իրենց սպասարկող անձնակազմով, • տեխնիկական անհրաժեշտ գույք, այդ թվում՝ միջազգային չափորոշիչների համապատասխան մրցավարական անհրաժեշտ գնահատման սարքավորումներ, խմելու ջուր և գրենական պիտույքներ, • ձայնային ապարատուրա՝ սպասարկող անձնակազմով, • բժշկական ծառայություններ՝ անհրաժեշտ դեղորայքով, այդ թվում՝ սառեցնող-ցավազրկող, կամ շտապ բուժ օգնության 1 անձնակազմի ծառայություններ, • սպասարկող տեխնիկական անձնակազմի ծառայություններ, • խորհրդակցության անցկացում միջոցառման մասնակիցների ներկայացուցիչների մասնակցությամբ, • մրցավարների քանակի ճշտում և ընտրության կատարում համապատասխան մարզաձևի ֆեդերացիայի միջոցով,	1448000	1	ք.Երևան	մարտ

			• Ռուսաստանի Դաշնությունից, կամ արտերկրց հրավիրված մեկ միջազգային կարգի մրցավարի ընդգրկում գլխավոր մրցավարական անձնակազմում: • Արտերկրից հրավիրված մրցավարի համար օրական երեքանգամյա սննդով քառօրյա հյուրանոցային ծառայություններ, • մրցավարական և սպասարկող տեխնիկական անձնակազմին օրապահիկների կանխիկ գումարների բաշխում, • միջոցառման հաղթողների և մրցանակակիրների պարգևատրում՝ Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված քանակի, որակի և տեսքի գավաթներով, դիպլոմներով, պատվոգրերով ու շնորհակալագրերով, ինչպես նաև մետաղական, ոսկեգույն, արծաթագույն, բրոնզագույն մեդալներով, որոնց առջևի երեսին նշված լինի գրված տեղն ու միջոցառման անվանումը, իսկ երկրորդ երեսին՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ գրառումն ու Երևանի զինանշանի պատկերը:				
37	92621110	Լողի Երևան քաղաքի առաջնություն	«Լողի Երևան քաղաքի առաջնություն» մարզական միջոցառման անցկացման համար անհրաժեշտ է ապահովել՝ • միջոցառման անցկացումը մասնագիտացված 50 մետրանոց լողավազանում, որը կահավորված լինի 4-5 լողուղիներով, հանդերձարաններով և լոգարաններով, • մասնագիտական անհրաժեշտ գույք, • տեխնիկական անհրաժեշտ գույք, խմելու ջուր և գրենական պիտույքներ, • ձայնային ապարատուրա՝ սպասարկող անձնակազմով, • բժշկական ծառայություններ՝ անհրաժեշտ դեղորայքով, այդ թվում՝ սառեցնող-ցավազրկող, • սպասարկող տեխնիկական անձնակազմի ծառայություններ, • խորհրդակցության անցկացում միջոցառման մասնակիցների ներկայացուցիչների մասնակցությամբ, • մրցավարների քանակի ճշտում և ընտրության կատարում համապատասխան մարզաձևի ֆեդերացիայի միջոցով, • մրցավարական և սպասարկող տեխնիկական անձնակազմին օրապահիկների կանխիկ գումարների բաշխում, • միջոցառման հաղթողների և մրցանակակիրների պարգևատրում՝ Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված քանակի, որակի և տեսքի գավաթներով, դիպլոմներով, պատվոգրերով ու շնորհակալագրերով, ինչպես նաև մետաղական, ոսկեգույն, արծաթագույն, բրոնզագույն մեդալներով, որոնց առջևի երեսին	438000	1	ք.Երևան	հուլիս

			նշված լինի գրված տեղն ու միջոցառման անվանումը, իսկ երկրորդ երեսին՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ գրառումն ու Երևանի զինանշանի պատկերը:				
51	92621110	Սպորտային պարերի Երևան քաղաքի առաջնություն	«Սպորտային պարերի Երևան քաղաքի առաջնություն» մարզական միջոցառման անցկացման համար անհրաժեշտ է ապահովել՝ · միջոցառման անցկացումը մասնագիտացված և միջազգային չափորոշիչներին համապատասխան, մարզադահլիճում /+ 10 աստիճանից ցածր ջերմաստիճանի գրանցման դեպքում՝ ջեռուցվող/, · մասնագիտական անհրաժեշտ գույք, · տեխնիկական անհրաժեշտ գույք, խմելու ջուր և գրենական պիտույքներ, · ձայնային ապարատուրա՝ սպասարկող անձնակազմով, · բժշկական ծառայություններ՝ անհրաժեշտ դեղորայքով, · սպասարկող տեխնիկական անձնակազմի ծառայություններ, · խորհրդակցության անցկացում միջոցառման մասնակիցների ներկայացուցիչների մասնակցությամբ, · մրցավարների քանակի ճշտում և ընտրության կատարում համապատասխան մարզաձևի ֆեդերացիայի միջոցով, · մրցավարական և սպասարկող տեխնիկական անձնակազմին օրապահիկների կանխիկ գումարների բաշխում, · միջոցառման հաղթողների և մրցանակակիրների պարգևատրում՝ Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված քանակի, որակի և տեսքի գավաթներով, դիպլոմներով, պատվոգրերով ու շնորհակալագրերով, ինչպես նաև մետաղական, ոսկեգույն, արծաթագույն, բրոնզագույն մեդալներով, որոնց առջևի երեսին նշված լինի գրված տեղն ու միջոցառման անվանումը, իսկ երկրորդ երեսին՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ գրառումն ու Երևանի զինանշանի պատկերը:	588000	1	ք.Երևան	ապրիլ
52	92621110	Սուսերամարտի Երևան քաղաքի առաջնություն	«Սուսերամարտի Երևան քաղաքի առաջնություն» /թրասուսեր, ճկասուսեր և խոցասուսեր մրցաձևերից/ մարզական միջոցառման անցկացման համար անհրաժեշտ է ապահովել՝ · միջոցառման անցկացումը մասնագիտացված մարզադահլիճում /+ 10 աստիճանից ցածր ջերմաստիճանի գրանցման դեպքում՝ ջեռուցվող,/ որը կահավորված լինի միջազգային չափանիշներին համապատասխան սուսերամարտի հարթակով, համապատասխան էլեկտրասարքավորումներով, էլեկտրական	438000	1	ք.Երևան	հոկտեմբեր

			ցուցատախտակով /տաբլո/ և այլն, • մասնագիտական անհրաժեշտ գույք, • տեխնիկական անհրաժեշտ գույք, խմելու ջուր և գրենական պիտույքներ, • ձայնային ապարատուրա՝ սպասարկող անձնակազմով, • բժշկական ծառայություններ՝ անհրաժեշտ դեղորայքով, • սպասարկող տեխնիկական անձնակազմի ծառայություններ, • խորհրդակցության անցկացում միջոցառման մասնակիցների ներկայացուցիչների մասնակցությամբ, • մրցավարների քանակի ճշտում և ընտրության կատարում համապատասխան մարզաձևի ֆեդերացիայի միջոցով, • մրցավարական և սպասարկող տեխնիկական անձնակազմին օրապահիկների կանխիկ գումարների բաշխում, • միջոցառման հաղթողների և մրցանակակիրների պարգևատրում՝ Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված քանակի, որակի և տեսքի գավաթներով, դիպլոմներով, պատվոգրերով ու շնորհակալագրերով, ինչպես նաև մետաղական, ոսկեգույն, արծաթագույն, բրոնզագույն մեդալներով, որոնց առջևի երեսին նշված լինի գրված տեղն ու միջոցառման անվանումը, իսկ երկրորդ երեսին՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ գրառումն ու Երևանի զինանշանի պատկերը:				
57	92621110	Ռուդոլֆ և Եղիշե Կարապետյանների հիշատակին նվիրված միջոցառումներ	Ռուդոլֆ և Եղիշե Կարապետյանների հիշատակին նվիրված ազատ ոճի ըմբշամարտի միջազգային մրցաշարի անցկացման համար անհրաժեշտ է ապահովել՝ • միջոցառման անցկացումը միջազգային չափորոշիչներին համապատասխան և առնվազն 500 հանդիսատեսի համար նախատեսված նստարաններով մարզադահլիճում /+ 10 աստիճանից ցածր ջերմաստիճանի գրանցման դեպքում՝ ջեռուցվող/, որը կահավորված լինի ըմբշամարտի առնվազն 2 գորգերով և էլեկտրոնային ցուցատախտակով /տաբլո/, • մասնագիտական անհրաժեշտ գույք, • տեխնիկական անհրաժեշտ գույք, խմելու ջուր և գրենական պիտույքներ, • եռօրյա և օրական երեքանգամյա սնունդով հյուրանոցային ծառայություններ ՀՀ այլ քաղաքներից և արտերկրից ժամանած մարզական պատվիրակությունների 100 անդամների համար: • ձայնային ապարատուրա՝ սպասարկող անձնակազմով, • բժշկական ծառայություններ՝ անհրաժեշտ դեղորայքով, այդ	2600000	1	ք.Երևան	նոյեմբեր

			թվում՝ սառեցնող-ցավազրկող, կամ շտապ բուժ օգնության 1 անձնակազմի ծառայություններ, • սպասարկող տեխնիկական անձնակազմի ծառայություններ, • խորհրդակցության անցկացում միջոցառման մասնակիցների ներկայացուցիչների մասնակցությամբ, • մրցավարների քանակի ճշտում և ընտրության կատարում համապատասխան մարզաձևի ֆեդերացիայի միջոցով, • մրցավարական և սպասարկող տեխնիկական անձնակազմին օրապահիկների կանխիկ գումարների բաշխում, • միջոցառման հաղթողների և մրցանակակիրների պարգևատրում՝ Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված քանակի, որակի և տեսքի գավաթներով, դիպլոմներով, պատվոգրերով ու շնորհակալագրերով, ինչպես նաև մետաղական, ոսկեգույն, արծաթագույն, բրոնզագույն մեդալներով, որոնց առջևի երեսին միջոցառման լոգոյի ֆոնի վրա նշված լինի գրված տեղն ու միջոցառման անվանումը, իսկ երկրորդ երեսին՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ գրառումն ու Երևանի զինանշանի պատկերը:				

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900012410479
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ

ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ ՍՊԸ
ք. Ստեփանավան, Զարենցի 179/28
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16033015694600
ՀՎՀՀ 06952546

Գ. Աղաջանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
28. 03. 2019թ. կնքված ԵՔ-ԳՀԾՁԲ-19/43-1
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախ. չ/հ	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	ՀՀ 28-րդ մարզական խաղեր մարզական միջոցառումներ			3400000	3400000	3400000	3400000	3400000	3400000	3400000	3400000	3400000	3400000	3400000
3	ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկության երևանյան փուլ			1900000	1900000	1900000	1900000	1900000	1900000	1900000	1900000	1900000	1900000	1900000
4	ՀՀ դպրոցականների շախմատի 13-րդ օլիմպիադայի երևանյան փուլ					600000	600000	600000	600000	600000	600000	600000	600000	600000
5	Երևանի հատուկ դպրոցների ֆուտբոլի մրցաշար					650000	650000	650000	650000	650000	650000	650000	650000	650000
6	Երևանյան մարզական ամառ 2019 մարզամշակութային միջոցառում							1350000	1350000	1350000	1350000	1350000	1350000	1350000
18	«Լավագույն մարզական ընտանիք» հանրապետական մրցույթ						4488000	4488000	4488000	4488000	4488000	4488000	4488000	4488000
19	«Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» հանրապետական մրցույթ								1048000	1048000	1048000	1048000	1048000	1048000
27	Բոնցքամարտի Երևան քաղաքի առաջնություն			448000	448000	448000	448000	448000	448000	448000	448000	448000	448000	448000
29	Գեղասահքի Երևան քաղաքի առաջնություն			1448000	1448000	1448000	1448000	1448000	1448000	1448000	1448000	1448000	1448000	1448000

37	Լոռի Երևան քաղաքի առաջնություն							438000	438000	438000	438000	438000	438000	438000
51	Սպորտային պարերի Երևան քաղաքի առաջնություն				588000	588000	588000	588000	588000	588000	588000	588000	588000	588000
52	Սուսերամարտի Երևան քաղաքի առաջնություն										438000	438000	438000	438000
57	Ռուդոլֆ և Եղիշե Կարապետյանների հիշատակին նվիրված միջոցառումներ											2600000	2600000	2600000
Ընդամենը														**19396000**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900012410479
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ
ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ ՍՊԸ
ք. Ստեփանավան, Զարենցի 179/28
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16033015694600
ՀՎՀՀ 06952546

Գ. Աղաջանյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____ և
_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 9
« ԵՔ-ԳՀԾՁԲ-19/43-1» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան

« 28 » մարտի 2019 թ.

ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ -ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Աղաջանյանի /ID՝ 010604023, տրված՝ 28.09.2018թ., 003- կոմից/, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերության), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ *ԵՔ-ԳՀԾՁԲ-19/46* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ ՍՊԸ
ք. Ստեփանավան, Չարենցի 179/28
«ԿՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16033015694600
ՀԿՀՀ 06952546

Ա. Աղաջանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**[1]

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 16033015694600

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 06952546

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Երևանի քաղաքապետարան

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900015211429

14.Գումարը (թվերով և բառերով)՝ **1939600** / մեկ միլիոն ինը հարյուր երեսունինը հազար վեց հարյուր/

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները	21.ա. Վճարողի ստորագրությունները՝
/_____/	/_____/
/_____/	/_____/
22.բ. Կ.S.	21.բ. Կ.S.

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*